ՏԵՂԵԿԱՆՔ

««Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» արձանագրության կնքման նպատակահարմարության մասին

««Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» արձանագրության կնքումը բխում է «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 1-ին հոդվածի 4-րդ պարբերության դրույթներից:

«Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագիրն ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 2-ին, մինչդեռ «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագիրը ստորագրվել է 2014 թվականի դեկտեմբերի 23-ին:

Միաժամանակ, ««Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերություններում հիշատակվում են երկու արձանագրություններ, որոնցով.

- Ղրղզստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միությանը միանալու կապակցությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին» մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում և ԵՏՄ իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայամանագրերում կատարվելու են համապատասխան փոփոխություններ (հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության միանալու առնչությամբ՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում և Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի ձևավորման շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերում կատարված փոփոխությունները),

- սահմանվելու են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի և միջազգային այլ պայմանագրերի առանձին նորմերի Ղրղզստանի Հանրապետության կողմից կիրառման պայմանները և անցումային դրույթները:

Վերոնշյալ արձանագրությունների ստորագրումը նախատեսվում է մինչև 2015 թվականի մարտ ամիսը, և Հայաստանի Հանրապետությունը, ս.թ. հունվարի 2-ից հանդիսանալով Եվրասիական տնտեսական միության անդամ, ստորագրելու է վերոնշյալ արձանագրությունները:

Ելնելով վերոգրյալից ««Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» արձանագրության կնքումը համարում ենք նպատակահարմար:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ**